Քեթի

Մակերես՝ 17.5կմ^2

Բնակչություն՝ 950

qeti.shirak@mta.gov.am

Քեթի գյուղը գտնվում է Շիրակի մարզի Ախուրյանի նախկին տարածաշրջանում՝ Երևան-Գյումրի-Վրաստան միջպետական ավտոճանապարհի վրա: Մարզկենտրոն Գյումրիից հեռավորությունը 10 կմ, Երևանից՝ 135կմ:

Համայնքի վարչական տարածքը կազմում է 1753.1 հա, բարձրությունը ծովի մակարդակից 1750 մ: Համայնքի բնակչությունը 2013թ. հունվարի 1-ի դրությամբ կազմում է 950 մարդ, 335 տնային տնտեսություն:

Համայնքում գործում է մեկ միջնակարգ դպրոց, բուժկետ,կապի հանգույց, գրադարան, ժամանակավոր դադարից հետո կգործի մանկապարտեզը:

Ժամանակակից գյուղը հիմնադրվել է 1829 թվականին նախ որպես Մեծ Քեթի, հետագայում՝ Քեթի:

Գյուղը որպես բնակատեղի ունի հին պատմություն: Այդ են վկայում մ.թ.ա. 3-2-րդ հազ. կիկլոպյան ամրոցի, դամբարանադաշտերի և բնակատեղիների ,5-19-րդ դդ. և 12-20-րդ դդ. եկեղեցիների և մատուռների հետքերը, 7-20-րդ դդ. և 19-20-րդ դդ գերեզմանոցները:

Պեղումների ժամանակ հայտնաբերվել են հնագիտական բարձր արժեք ներկայացնող նյութեր, որոնք պահպանվում են տարբեր թանգարաններում:

Ազգաբնակչությունը հիմնականում զբաղվում է անասնապահությամբ և հողագործությամբ՝ ցորենի, գարու, առվույտի, կարտոֆիլի, կաղամբի , բանջարա-բոստանային կուլտուրաների և մրգերի արտադրությամբ:

Համայնքի հիմնախնդիրներն են՝

գազաֆիկացում, ոռոգման համակարգ, մշակույթի տուն, հակակարկտային կայանքների ավելացում:

ՀՀ Շիրակի մարզ, գ. Քեթի
Ինդեքս՝ 2626